

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ.

Հաւատացեալք Քրիստոսի, մեր Փրկիչը մարդկան փրկութեան մեծ գործը ի գլուխ տարաւ փառաւոր յաղթանակաւ, յաղթեց աշխարհի իշխանութեանը, առ ոտն իոխեց մեղքերի ամեն տեսակները, հարթեց մեր յառաջ առաքինութեան, բարեգործութեան եւ Արքայութեան ճանապարհը, խորտակեց մարդկութեան վերայ բռնացող յաւիտենական մահու եղջիւրները եւ աստուածային փառքը յարեաւ ի մեռելոց Իւր յարութիւնը մեր հաւատացեալներին նոյնօրինակ յարութեան անսուտ առհաւատչեայ պարգեւելով: Նորա ամբողջ երկրաւոր կեանքը մի երկունք, պատրաստութիւն էր մեր ամենիս փրկութեան, մեր կեանքը եւս թող երկունք ու պատրաստութիւն լինի մեր սեպհական փրկութեան: Յիսուսի յարութիւնը աւետող երկնային հրեշտակի ձայնը թող յարուցանէ եւ մեզ մեր բարոյական մեռելութիւնից. լցնէ մեր սրտերը Յիսուսի եւ ընկերի սիրով, զինէ մեր հոգին մեր յարութեան եւ երանական կենաց վայելման յուսովն ու հաւատովը, որով կարող լինինք մեր քրիստոնէաւայել առաքինութիւններովն ու բարի գործերով յաղթանակել աշխարհի եւ նորա ամեն հոգեկորոյս մեղքերի ու հրապուրանքների վերայ ու մեր հոգեբուխ գոհութեանս փառաբանութեան եւ աղօթից անուշահոտ իւզով ու խնկով պատրաստութիւնը տօնելու Փրկչի աստուածային յարութիւնը, յաւիտենական կենաց մէջ Նորան փառակից լինելու կենդանի յուսով ու հաւատով:

ՀԱՅ ԲԵՌՆԱՎՐԻ ԶԱՏԻՎԸ.

Քսան տարի է, որ իմ քաղցր ամուսին
 Անուշ, մանրիկ զաւակներուս հետ մէկ տեղ
 Քաղցած, ծարաւ թողեր մեր տուն մեր երկիր,
 Պանդխտութեան մէջ կտանջուիմ ես այստեղ: